ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

«08» դեկտեմբերի 2025թ. N ԱՊ/1020- Ա

ք. Արմավիր

# Ո Ր Ո Շ Ու Մ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 2-ի NԴԽ/15.2/41425-2025 հանձնարարականը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բոլոր համայնքներում, տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 19-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու նպատակով

**Որոշում եմ՝**

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/ աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Արմավիր մարզային

գործակալության աշխատակիցներին և համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

3. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/, սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն ավարտել 2026թվականի հունվարի 20-ին և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության*

*Արմավիրի մարզպետի*

*2025թվականի դեկտեմբերի 08--ի*

*N որոշման*

ՄՈ/1020-Ա

*Աշխատանքային խմբի կազմ*

| | |
|---|---|
| Խմբի ղեկավար՝ Ա.Այվազյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ |

*Անդամներ՝*

| | |
|---|---|
| Զ. Սարդարյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ |
| Կ. Մարգարյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ |

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան